ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«19» ապրիլի 2019թ.

ք. Երևան, Ս. Դավթի 87Ա

ՈՐՈՇՈՒՄ N 686-Ա

ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ Հայկ Էմիլի Կիտեսովի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ տեղեկանքի ֆիզիկական անձ Հայկ Էմիլի Կիտեսովի (ՀԾՀ՝ 2903910081, հասցե՝ ք. Երևան Դավթաշեն 2 թղմ. 18 շ. 23 բն.) չկատարված հարկային պարտավորությունը 11.01.2018 թվականի դրությամբ կազմել է 50.106 դրամ, որից ապառք՝ 36.674 դրամ, տույժ՝ 4.263 դրամ, տուգանք՝ 9.169 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ Հայկ Էմիլի Կիտեսովի չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին վերջինս պատշաճ կերպով ծանուցվել է, վճարումներ չի կատարել, չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և նշվածի վերաբերյալ որևէ բացատրություն, առարկություն չի հայտնել:

Համաձայն ՀՀ ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության կողմից ստացված օտարված տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկությունների Հայկ Էմիլի Կիտեսովի կողմից 2017թ. ընթացքում 2 անգամ իրականացվել է սեփականություն հանդիսացող նույն տեսակի գույքի /թեթև մարդատար ավտոմեքենա/ օտարման գործարք, որը համաձայն իրավահարաբերության պահին գործող <<Ավելացված արժեքի հարկի մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի <<բ>> ենթակետի համարվում է ԱԱՀ-ով հարկվող գործարք:

Արդյունքում՝ սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը 11.01.2018 թվականի դրությամբ կազմում է 50.106 դրամ, որից ապառք՝ 36.674 դրամ, տույժ՝ 4.263 դրամ, տուգանք՝ 9.169 դրամ, որն առաջացել է ֆիզիկական անձի կողմից 2017 թվականի 3-րդ եռամսյակում շարժական

գույքի օտարման գործարքի արդյունքում և տվյալ գործարքից բխող հաշվարկը օրենքով սահմանված ժամկետում հարկային մարմին չներկայացնելու և մինչև 01.01.2018թ. գործող <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածների, իսկ 01.01.2018 թվականից հետո ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից և տուգանքներից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր և տուգանքներ, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի և տուգանքներ հետ միասին:

ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար է, որը վճարվում է հարկ վճարողների կողմից՝ Օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում: Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով հարկային պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ **սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման:**

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Հայկ Էմիլի Կիտեսովից գանձել 50.106 ՀՀ դրամ պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի

70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____
Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն _____ ամսաթիվ

Կատ.՝ ԻՎ ՀԳ բաժնի
գլխավոր մասնագետ,
Ա. Ենոքյան, Հեռ. 011549191
91-71 ներքին հհ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի: